ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ



Գծ. 1 – Զվարթնոց. արևմտյան ճակատ (վերակազմությունը՝ Թ. Թորամանյանի)

Եկեղեցաշինության նոր դարաշրջան է սկսվում մեր օրերում: Այն սկսվում է տարերայնորեն, հավատացյալների նախաձեռնությամբ և միջոցներով, որը գնալով արագություն է հավաքում: Հավանաբար այն զգալի ծավալներ կընդգրկի և որոշակի տեղ կզբաղեցնի հանրապետությունում տարվելիք ընդհանուր շինարարության կողքին, հենց որ տարածաշրջանում խաղաղություն վերահաստատվի, ժողովրդական տնտեսության իրավիճակը բարելավվի:

Ինչպես ամեն մի շինարարական ձեռնարկ, այնպես էլ եկեղեցու շինություն կամ համալիր նախքան կառուցումը սկսելը նախագծվում է, նախահաշիվ կազմվում և այլ նախապատրաստական աշխատանքներ իրականացվում:

Տասնամյակներ առաջ նման պատկեր ուներ մեր բնակավայրերում՝ գյուղերում և ավաններում ակումբների և կուլտուրայի տների կառուցումներ ձեռնարկելը: Ի վերջո այդ ամենը դադարեց տարերային լինելուց, համապատաս-

խան նախարարություններ գործը վերցրին իրենց ձեռքը՝ կարգ ու կանոն մտցնելով այդ ասպարեզում:

Հասկանալի է, որ եկեղեցաշինությունը ևս պետք է դուրս բերել այդ տարերայնությունից և այն վարել ավելի կազմակերպված ձևով: Այժմ գյուղական որոշ համայնքների նախաձեռնությամբ կառուցվող կամ կառուցվելիք եկեղեցիների նախագծումը, որ իրականացնում են ճարտարապետներ և, թերևս, նաև ոչ մասնագետներ, ոչ բոլոր դեպքերում են նայվում Էջմիածնի Մայր աթոռի ճարտարապետական խմբի կողմից, հանգամանք, որը հետագայում կարող է առաջացնել բարդություններ և դժվա-րություններ: Դեռ ավելին, հնարավոր է մտածել, որ Մայր աթոռի հիշյալ ճարտարապետական խումբը իր փոքրաթիվության պատճառով հնարավորություն չի ունենա ըստ ամենայնի բազմակողմանիորեն քննել ներկայացվող նախագծերը, և որ կարևոր է՝ բարձր մակարդակ պահպանել այդ կարևորագույն գործում:

Շատ հնարավոր է, որ փորձեր արվեն գործը «հեշտացնելու» ուղղությամբ, և պահանջները բավարարելու պատրվակով տիպային օրինակներ ստեղծվեն, հանձնվեն պատվիրատուներին, ինչպես դա արվում էր մասսայական ակումբաշինության և աղբյուր-հուշարձաններ կառուցելու ժամանակներում: Անցյալի փորձը ցույց է տալիս, որ այդ անել չի կարելի: Ամեն բնակավայր և այնտեղ կառուցված եզակի և նշանակալից, այն էլ մեծածավալ շինություն պիտի ունենա իր յուրօրինակ դեմքը՝ մյուսներից տարբեր: Վերջերս Հայկական հանրագիտարանը թերթելիս նկատեցի, որ միևնույն նախագծով կուլտուրայի տներ են կառուցվել Արարատյան դաշտի հարևան բնակավայրերում, հանգամանք, որն անկասկած հաճելի չէ: Անցյալում մեր եկեղեցաշինարարները այդ բանը գիտակցել են և վարպետորեն խուսափել են միանման եկեղեցիներ կառուցելուց: Վերջիվերջո դրանցից ամեն մեկը իր սրբի անունն է կրելու, որոնք միմյանց նման չեն: Ավան-Հռիփսիմեի տիպի շուրջ 20 եկեղեցիներ ենք ունեցել, սակայն ընդհանուր ծավալատարածական հորինվածք ունենալով հանդերձ, դրանք միմյանցից զգալի տարբերվում են և չես ասի, թե մեկը մյուսի ուղղակի կրկնությունն է:

Պետք է նաև խուսափել եկեղեցիների նախագծումը որևէ ինստիտուտի հանձնարարել, դարձնել նրա մենաշնորհը: Հայաստանը ճարտարապետների մի հսկա բանակ ունի, նրանցից շատերն ի վիճակի են մեկական եկեղեցու նախագիծ ստեղծել և այդ կանեն սիրով և բարձր արվեստով: Վատ չէր լինի, եթե ճարտարապետների միությունն այդ նախաձեռնությունը իր ձեռքը վերցներ և Էջմիածնի Մայր աթոռի հետ գործակցելով բարձր արդյունքների հասներ: Անկասկած, բոլոր նախագծերը կքննարկվեն հատուկ ստեղծված գեղարվեստական խորհրդում, որի կազմում կընդգրկվեն բարձրակարգ արվեստագետներ, հոգևորականներ և շինարարներ:

Եվս մի կարևոր ցանկություն. հայ ճարտարապետության հանճարը դարերի ընթացքում ստեղծել է անկրկնելի կոթողներ. դրանցից շատերը կործանվել, որոշ մասերը անհետացել և հիմա էլ անհետանալու վրա են: Այդպես է Անիիում, այդպես է Պատմական Հայաստանի այլ վայրերում, ուր հայ շինարարական և նորոգչական գործունեությունը տեղ չունի:

Մեր ժամանակներում և մեր պայմաններում հնարավոր է նրանցից լավագույնների պատկերը, ծավալատարածական հորինվածքը ազնվորեն կրկնել ու պատմությանը տեղյակ դարձնել այդ կանխամտածված արարքի վերաբերյալ: Միթե՞ Երևանին, Գյումրիին ու Վանաձորին, Չարենցավանին և Հրազդանին, մեր մյուս քա-ղաքներին ու բնակավայրերին չեն զարդարի Զվարթնոցի և Անիի Մայր տաճարների, Առաքելոցի ու Ամենափրկչի, Աբուհամրենցի ու Խծկոնքի (Սարգսի եկեղեցու), Հոնենցի ու Հովվի տաճարների կրկնօրինակները, որոնք մենք փաստորեն չունենք, դրանց ծանոթ ենք միայն ու միայն մասնագիտական գրքերից: Կլինեն, իհարկե, մարդիկ, որ անհամաձայն կլինեն նման գործողությունների հետ, և իրենց հնարավորությունների սահմանում կխանգարեն, անհնար կդարձնեն դրանց իրականացումը: Այդպիսի մի բան տեղի ունեցավ 1989 թվականին: Աստվածահաճո հղացմամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի առաջադրանքով, հայոց կողմից քրիստոնեությունը որպես կրոն պետականորեն ընդունելու 1700-ամյակի (2001 թ.) առիթով Երևանում կառուցվելիք Արարատյան թեմի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին պիտի իրականացվեր Զվարթնոց

տաճարի ճարտարապետությամբ (մեծանուն ճարտարապետ-գիտնական Թորոս Թորամանյանի վերակազմությամբ):

Երբ նախագիծը քննվել, արժանացել էր մասնագետների հավանության, այդ ժամանակ էլ գլուխ բարձրացրեց արվեստագետների որոշ մասին յուրահատուկ էգոիզմը, այդ գեղեցիկ, հույժ օգտակար մտահղացումը խանգարվեց մի քանի ճարտարապետների, նկարիչների և եկեղեցական խորհրդի այդ ժամանակվա նախագահի անպատշաճ ջանքերով: Հայտարարվեց նախագծի մրցույթ, որը սպասված արդյունքը չտվեց, 3-4 տարի ժամանակ կորսվեց, քաղաքական-տնտեսական իրավիճակը փոխվեց, Զվարթնոցի վերականգնման միակ հնարավոր առիթը անդառնալիորեն բաց թողնվեց (նախատինքի արժանի արարք): Հույսով լինենք, որ նման երևույթները մեր օրերում այլևս չեն կրկնվի:

Տարիներ առաջ մեր հոդվածներից մեկում այս միտքը հայտնվել էր, սակայն պատշաճորեն չարձագանքվեց: Մոտ ապագայի հուսադրող հանգամանքները առ-հավատչյա են, պայմանները ռեալ, և հավատում ենք, որ կարող է այն իրականանալ:

Վերոհիշյալն ամենևին չի նշանակում, որ չպետք է նախագծել նոր եկեղեցիներ, ամենևին: Նորերը, որոնց թիվը հարյուրների կհասնի, պետք է նախագծվեն, սակայն նախագծերում պետք է պատշաճ տեղ գրավի ավանդականի և նորի օրգանական համադրումը, ըստ որում՝ բոլոր դեպքերում պետք է ձգտել, որ ամեն մի նախագծում որևէ տարր լինի առանձնապես հետաքրքիր, բնորոշ, օրիգինալ: Այս հարցում որոշ դասական կոթողներ իրենց առկայությամբ կօգնեն, որ նորերը մրցակցության մեջ զգան իրենց և ըստ այդմ դրսևորեն նոր, առավել նախընտրելի որակ:

Վերջերս ճարտարապետներից ոմանք բուն եկեղեցում՝ աղոթասրահում ծածկը ստեղծելիս գործադրում են գավիթներին յուրահատուկ խաչվող կամարների կոնստրուկտիվ համակարգը: Այդ, մեր հաստատ համոզմամբ, չի պատշաճում աղոթասրահին, որտեղ գերիշխողը գմբեթն է, իսկ գմբեթն իր զգալի չափերով չի կարելի դնել խաչվող կամարների վրա, այն հոգեբանորեն ահազդու է և ոչ համատեղելի աղոթասրահի ներքին տեսքին: Հատկանշական է, որ կառուցվածքի այդ ձևի գրեթե մասսայական գործադրումը Սուրբ Գրիգոր եկեղեցու նախագծման

մրցույթում հաջողություն չունեցավ: Այդպիսի բան մի անգամ տրվել է Զորադիրի Սուրբ Էջմիածին եկեղեցում, սակայն դա վերակառուցման արգասիք էր և չի կարելի ասել, թե այն հաջող-վել էր և չի կարող այն օրինակ ծառայել:

Առաջնակարգ կարևորություն ունի եկեղեցիների տեղադրումը բնակավայրի հատակագծային հենքում: Այն չի կարելի տեղակապել պատահական տեղում այն պատճառաբանությամբ, որ տվյալ վայրը ազատ է այլ կարգի կառուցապատումից: Եկեղեցական շինության տեղադրումը ամեն կոնկրետ դեպքում պետք է որոշի մասնագիտական հանձնաժողովը տեղի այդ գործով զբաղվողների հետ միասին, քաղաքաշինության պահանջների պահպանմամբ:

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

«Արվեստ» ամսագիր, 1994, թիվ 6-7, էջ 14-15: